59-ՐԴ ՆԻՍՏ

10 հունվարի 1919թ.

Նախագահ - Հայաստանի Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված:

Օրակարգի հարցերն են.

1. Արտաքին գործոց նախարարի զեկուցումը.
2. Զինվորական մինիստրության նախահաշիվը.
3. Պարենավորման մինիստրության նախահաշիվը.
4. Գերմանիայից և Ավստրոհունգարիայից վերադարձող գերիներին նպաստ տալու համար վարկ բաց թողնելու օրինագիծ.
5. Ֆելդշերների և գթության քույրերի և եղբայրների պարտադիր կուրսեր բանալու օրինագիծ.
6. Ֆինանսների մինիստրին բամբակ գնելու համար 10 միլիոն վարկ բաց թողնելու օրինագիծ.
7. Հարցեր և հարցապնդումներ:

Պատգամավոր Բաբալյանը կզեկուցի զինվորական մինիստրության նախահաշվի մասին:

Բաբալյան - 1918* թվի համար զինվորական կոմիսիան ներկայացնում է հետևյալ նախահաշիվը.

Մատակարարման բավարարման համար	24.953.378ռ.
Հրետանու	456.000ռ.
Ճարտարապետական	32.520ռ.
Տեխնիկական ծախսերի	241.020ռ.
Բժշկաառողջապահական ծախսերի բավարարման համար	177.700ռ.
Բնակարանային բավարարման համար	2.311.302ռ.
Հատուկ ծախսեր	240.000ռ.
Լոռու շրջանի ռազմաքաղաքական վարչության համար	23.600ռ.
Ընդամենը	28.435.520ռ.

Նախագահ - Առարկություն չկա՞:

Ազատյան - Ի նկատի ունենալով, որ մեր ֆրակցիան համաձայն չէ զինվորական կոմիսիայի զեկուցման ձևին, որն ընդունել է պառլամենտը, մենք առաջարկում ենք հետևյալ բանաձևը.

«Լսելով զինվորական հանձնաժողովի զեկուցումը զինվորական մինիստրության նախահաշվի մասին, որով երկրից չորս ամսվա համար 28.435.520 ռուբլի ծախս է պահանջվում և որը ներկայացրած է Հայաստանի Խորհրդին, վերջինիս որոշման հիման վրա, ընդամենը 9 տողի վրա՝ նախահաշվի առանձին բաժինների գումարներով, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան հայտարարում է, որ իր այդ որոշումով Հայաստանի Խորհուրդը հրաժարվում է իր հիմնական, ամենախոշոր իրավունքներից մեկից և պետության ծախսի բյուջեի համարյա կեսի կիրառման

* Այդպես է բնագրում, պետք է լինի 1919թ.:-Ծանոթ. կազմ.:

ամբողջովին մեր անպատասխանատու և հետադեմ կառավարությանն է հանձնում, որը համառորեն հրաժարվում է ճանաչել պառլամենտի իրավունքները:

Գտնելով, որ զինվորական մինիստրության նախահաշվի մեջ որոշ կետեր կարող են իսկապես գաղտնիք կազմել, սոց[իալ]-դեմ[ոկրտական] ֆրակցիան անհանդուրժելի է համարում, սակայն, նախահաշվի քննության ներկա եղանակը, որով ոչ թե նախահաշվի մի քանի կետերը, այլ ամբողջ նախահաշիվը պառլամենտի համար գաղտնիք է հայտարարվում:

Սոց[իալ]-դեմ[ոկրտական] ֆրակցիան չի կարող հաշտվել այն մտքի հետ, որ պառլամենտը իր բյուջետային իրավունքները զինվորական հանձնաժողովին կամ մինիստրությանը զիջի: Չկամենալով իր վրա վերցնել պառլամենտի առաջ փաստորեն անպատասխանատու զինվորական հանձնաժողովի վարած քաղաքականության ու նրա կազմած նախահաշվի բովանդակության պատասխանատվությունը, սոց[իալ]-դեմ[ոկրատական] ֆրակցիան պահանջում է, որ զինվորական հանձնաժողովը գործի բոլոր հանձնաժողովների նակազով վերապահած շրջանակներում և որ նրա մեջ վերջնական լուծում ստանան, առանց խորհրդի քննության, իսկապես պետական գաղտնիք կազմող մի քանի հարցեր, այն պայմանով սակայն, որ այդ սակավաթիվ հարցերի գաղտնիության վերաբերմամբ հանձնաժողովում անգամ միաձայն որոշում տեղի ունենա:

Նկատի առնելով զինվորական մինիստրության վարած հետադիմական մեծածախս և կործանիչ քաղաքականությունը, նրա անտարբեր և հաճախ հանցավոր վերաբերմունքը դեպի զորքի նյութական և բարոյական պահանջները, մանավանդ մահվան պատիժը վերականգնելու վերաբերյալ հակաօրինական կարգադրությունը, ինչպես և այդ մինիստրության ամբողջ նախահաշվի գաղտնիք հայտարարությունը, սոց[իալ]-դեմ[ոկրատական] ֆրակցիան առաջարկում է մերժել այդ նախահաշիվը:

Անցնելով այնուհետև զինվորական մինիստրության քաղաքականությանը, սոց[իալ]-դեմ[ոկրատական] ֆրակցիան հայտարարում է, որ նա մինչև օրս անպատասխանատու անձանց քաղաքականություն է եղել, որոնց ձեռքում գաղտնապահությունը հակաժողովրդական և ավերիչ քայլեր անելու մի միջոց է հանդիսացել և որոնք համարձակվեցին սկսել հայ-վրացական պատերազմը՝ չսպառելով տերիտորիալ վեճի լուծման բոլոր խաղաղ միջոցները, չընդունելով Հայաստանի Հանրապետության համար այնքան նպաստավոր առաջարկը, որ արեցին դաշնակից պետությունների ներկայացուցիչները և բոլորովին անտես անելով երկրի զինվորական ուժերը, պետության տրամադրության տակ եղած պարենավորման և ֆինանսական միջոցները: Արտաքին ուժի միջամտության շնորհիվ էր միայն, որ հայ-վրացական պատերազմը մեզ համար կատաստրոֆիկ հետևանք չունեցավ: Սոց[իալ]-դեմ[ոկրատական] ֆրակցիան բազմիցս անգամ հայտարարել է և այսօր անհրաժեշտ է համարում կրկնել այստեղ, որ այդ պատերազմի մեջ մի կողմից հանցավոր են հանդիսանում խորհրդի մեծամասնությունն ու մինիստրությունը, և որ պատերազմի ամբողջ պատասխանատվությունը նրանց վրա է ծանրանում»:

Ազատյան (տեղից) - Մեզ ասում են վրացական ագենտներ: Պարո՛ն նախագահ, խնդրում եմ դադարեցնեք այդ բացականչությունները՝ սկանդալից խուսափելու համար:

Նախագահ - Բազմիցս կրկնել եմ, այժմ էլ ասում եմ, որ պատգամավորների կողմից չպիտի լինեն մասնավոր բացականչություններ:

Ստեփանյան - Զինվորական մինիստրության սմետան ֆինանսական հանձնաժողովն ամբողջովին չի քննել, աչքի առաջ ունենալով, որ այդ շատ երկար կտևի, մինչդեռ այդ մասին հայտարարվում է շտապողականություն: Ազատյանն ասում է, որ սմետան պատգամավորների համար ամբողջովին գաղտնիք է մնում: Սա սխալ է, քանի որ յուրաքանչյուր ֆրակցիա իր ներկայացուցիչն ունենալով զինվորական հանձնաժողովի մեջ, լիակատար հնարավորություն ունի գաղտնիքներն իմանալու: Այնուհետև մենք ունենք նաև պետական կոնտրոլ, որն հսկում է ստացված ծախսերի վրա: Այնուհետև պատգամավոր Ազատյանը այնքան էլ

հայրենասեր չէ, որքան ինքն է կարծում: Նրա երեկվա ընկերները Թիֆլիսում, առանց որևէ առարկության, մեզ հետ կռվելու համար բաց թողին 25 միլիոն վարկ: Դրանից պիտի խրատ առներ պատգ[ամավոր] Ազատյանը: Այնուհետև մինչդեռ նրանից ավելի ծախ բոլշևիկները չմտցրին Ռուսաստանում միլիցիական սիստեմ՝ վախենալով զորքի քայքայումից, այնինչ Ազատյանը առաջարկ է անում մտցնել զորքի մի այդպիսի ձև: Մենք չենք կարող կատարել Ազատյանի ուզածը: Այս խնդիրների վերաբերմամբ մենք գերազանցորեն ազգային տեսակետ ունենք: Պիտի մեր ազգը ուժեղ լինի: Իսկ դրա համար պիտի մեր զորքը լինի շատ, կանոնավոր և լավ հագնված ու կուշտ: Այս նպատակի համար մենք չենք խնայի ոչ մի նյութական միջոց: Այնուհետև զորքը ներկա անարխիայի ժամանակ իրավարարության մի կարևոր նեցուկ է, որ բացակայում է ոչ միայն մեր գավառներում, այլև մայրաքաղաքում, ինչպես օրինակ՝ քաղաքային ընտրությունների ժամանակ: Այս պատճառներով էլ պիտի նախահաշիվը հաստատել:

Նախագահ - Զեկուցողն անցնում է երկրորդ ընթերցման:

Բաբալյան - (կրկնում է վերև բերված զեկուցումը) - Մի բացատրություն եմ ուզում տալ. եթե նախահաշիվն 8-9 տող է, դա այդպես է արվել ֆրակցիաների համաձայնությամբ: Առհասարակ պիտի ասեմ, որ այս խնդիրներում զինվորական կոմիսիայում մեծ մասնակցություն են ունեցել սոց[իալ]-դեմոկրատները: Նախահաշիվը քննվել է մեծ մասամբ սոց[իալ]-դեմ[ոկրատ] Մալխասյանի նախագահությամբ և շատ կետեր հենց նա էլ զեկուցել է պառլամենտին, օրինակ՝ 5-7 միլիոնի վարկը:

Ազատյան - Ճիշտ է, աշխատել ենք զինվորական կոմիսիայի մեջ, բայց և ցանկանում ենք, որ նախահաշվի բոլոր կետերը հրապարակվեն: Այնուհետև առաջարկում ենք նախահաշվի 8-րդ կետը վերացնել:

Շահմազյան - Այս կետում հիշված վարկը պիտի տալ, քանի որ ծախսերն արդեն իսկ արած են, իսկ ռազմա-վարչական մարմնի վերացնելու հարցն առանձին դնել:

Ազատյան - Կարելի է նաև այժմ դնել:

Նախագահ - Հետո քննելն ավելի նպատակահարմար է: Քվեարկում եմ սոց[իալ]-դեմոկրատների բանաձևը (բերված է վերևում): Ստացավ երեք ձայն, չի անցնում: Պատգամավո՛ր Բաբալյան, նախահաշվի երրորդ ընթերցումն արեք:

Բաբալյան - (կարդում է):

Նախագահ - Քվեարկում եմ: Անցնում է: Խոսքը պատկանում է արտաքին գործոց պարոն մինիստրին:

Արտաքին գործոց մինիստր - հունվարի 5-ին՝ երեկոյան, Մինիստր նախագահի անունով մի հեռագիր ստացվեց Թիֆլիսից, այնտեղի անգլիական ներկայացուցիչ, գնդապետ Ժորդանից, թե գեներալ-մայոր Ուոկկերը մեկնում է Թիֆլիսից դեպի Կարս և ուրախ կլիներ հանդիպել Հայաստանի կառավարության ներկայացուցիչներին Ալեքսանդրապոլում կամ Կարսում:

Հեռագիրն ուշացած էր հասել Երևան (Թիֆլիսից տրված էր եղել ժամը 4-ին, ճաշից հետո): Մեր կառավարությունը հնարավորություն չունեցավ ուրեմն անհրաժեշտ կարգադրություններն անելու իր ժամանակին անգլիական գեներալին պարտ ու պատշաճ ընդունելությունը Հայաստանի երկաթուղային կայարաններում ցույց տալու վերաբերմամբ: Թե՛ այս հանգամանքը և թե՛ մի շարք կարևոր ու անհետաձգելի խնդիրների մասին անգլիական ներկայացուցչի հետ բանակցելու անհրաժեշտությունն աչքի առաջ ունենալով, կառավարությունը հանձնարարեց արտաքին գործերի մինիստրին՝ անձամբ գնալ Ալեքսանդրապոլ՝ գեներալ Ուոկկերի հետ տեսակցելու: Նույն գիշեր մինիստրը հատուկ գնացքով մեկնեց Կարս՝ ուղեկցությամբ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում պարոն Ջամալյանի և զորական մինիստրի ներկայացուցիչ գեներալ Գամազովի: Գեներալ Ուոկկերն ընդառաջ մեկնեց նույն գնացքով ֆրանսիական միսիայի կապիտան Պուադեբարը: Գեն[երալ] Ուոկկերին հեռագրվեց գնդապետ Ժորդանի հեռագիրն ուշ ստանալու և արտաքին գործոց մինիստրի Ալեքսանդրապոլ մեկնելու մասին:

Հունվարի 6-ի կեսօրին մինիստրը հասավ Ալեքսանդրապոլ: Գեն[երալ] Ուոկկերը եկել էր գիշերը և գտնվում էր իր սեփական գնացքում: Նույն օրը երկու անգամ տեսակցություն տեղի ունեցավ՝ մի քանի ժամ տևողությամբ յուրաքանչյուրը: Գեն[երալ] Ուոկկերը հանձնեց մինիստրին իր մի գրությունն հանուն «Հայաստանի Հանրապետության նախագահի՝» գրված Բաթումում, հունվարի 1-ին: Դրանով նա հայտնում է, որ ինքը եկել է Անդրկովկաս որպես զորական ներկայացուցիչ Մեծ Բրիտանիայի՝ ենթակա դաշնակից պետությունների բարձր մեծավորին և անգլիական գլխավոր հրամանատարին Կ. Պոլսում, որ իրեն հետ անմիջական առնչություն ունեն հետևյալ երկրները՝ Հայաստանի Հանրապետությունը, Վրաստանի Հանրապետությունը, Բաթումի նահանգը և Կարսի նահանգը, որ նման ֆունկցիաներ Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի հանրապետությունների վերաբերմամբ ունի գեներալ-մայոր Թոմսոնը՝ անգլիական զորքերի հրամանատարը Բաքվում: Գեներալ Ուոկկերին հանձնարարված է, որ նա ֆրանսիական միսիայի գնդապետ Շարդինիեի հետ հետամտի՝ արդյո՞ք կատարվում են Թուրքիայի և դաշնակից պետությունների միջև կնքված զինադադարի որոշումները: Բացի այդ, գեներալը հրաման ունի երաշխավորելու, ըստ հնարավորին գործակցելով Հայաստանի Հանրապետության հետ, որ օրենքը և կարգուկանոնը հարգվեն այդ հանրապետության մեջ՝ սպասելով խաղաղության կոնֆերանսի որոշմանը այս երկրի վերջնական վիճակի մասին: Գեն[երալ] Ուոկկերը հրաման ունի տեղեկացնելու Հայաստանի կառավարությանը, որ Մեծ Բրիտանիան մտադիր չէ գրավելու Անդրկովկասի որևէ մասը տևական ձևով: Մինչև խաղաղության կոնֆերանսի որոշումը գեներալը ենթադրում է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարության ամեն բանում, ինչ որ կօգնի կարգուկանոնի ու խաղաղության պահպանությանը: Գեներալը պատրաստ է ամեն ժամանակ փոխադրելու բրիտանական գլխավոր հրամանատարին Պոլսում ամեն մի առաջարկ, որը Հայաստանի Հանրապետության կառավարությունը կցանկա[նա] անել նրան և կամ դաշնակից պետություններին՝ իր երկրի ապագայի վերաբերմամբ: Գեներալը ամեն կերպ կաջակցի տեղ հասնելուն այն բոլոր ներկայացուցիչներին, որոնց կցանկա[նա] Հայաստանի կառավարությունն ուղարկել դաշնակից պետությունների մոտ: Իր ստացած հրահանգները կատարելու համար գեներալը ենթադրում է մոտակայքում զորամասեր ուղարկել Հայաստանի Հանրապետություն զանազան քաղաքները: Հայաստանում անգլիական զորամասերի ներկայության վերաբերյալ բոլոր խնդիրների վերաբերմամբ առաջիկայում պետք է դիմել գեներալ Ուոկկերին, որը խնդրում է, որ Հայաստանի կառավարությունը ամեն աջակցություն ցույց տա՝ իր ստացած հանձնարարություններն ի կատար ածելու գործում:

Արտաքին գործոց մինիստրը անգլիական ներկայացուցիչ գեներալի առաջ դրեց մի ամբողջ շարք կարևոր խնդիրներ, որոնք անհապաղ կտրուկ լուծման են կարոտ դաշնակից պետությունների ազդու միջամտությամբ: Կարսի շրջանի շուտափույթ դատարկումը (էվակուացիան) օսմանյան զորքերից, գաղթականության և առհասարակ Հայաստանի բնակչության պարենավորման խնդիրը, սովից տառապող շրջաններին անմիջապես ցորեն և ալյուր հայթայթելու խնդիրը, օսմանյան զորքերի կողմից հայ ժողովրդից գրաված և Կարսում ամբարած պարենի և պաշարեղենի չարտամուծման անհրաժեշտությունը, գրաված ու թալանված ամեն տեսակ գույքերի (մասնավոր, հանրային, ռազմական և տեխնիկական) չարտամուծման, հարստահարված ժողովրդին և Հայաստանի կառավարությանը վերադարձնելու և հատուցանելու խնդիրը, Կարսի շրջանի թե՛ ընդհանուր, թե՛ երկաթուղային և հեռագրային կառավարման խնդիրը, Անդրկովկասի երկաթուղային երթևեկության և Հայաստանի՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցության հաստատման և անհրաժեշտ ապրանքների ներմուծման խնդիրը:

Գեներալ Ուոկկերը ամենայն ուշադրությամբ ունկնդրեց մինիստրի առաջադրած հարցերին և պատրաստակամություն ցույց տվեց՝ կատարյալ աջակցություն ցույց տալ դրանց իրագործմանը: Շնորհակալություն հայտնելով Հայաստանի կառավարությանը՝ Երևան այցելելու հրավերի համար, ասաց, որ այժմ նա շտապում է շուտով վերադառնալ Բաթում՝ հարկ եղած կարգադրություններն այդտեղի համար լրացնելու և Թիֆլիս վերադառնալու, որից հետո կգա այցելելու Երևանը:

Հունվարի 6-ին գեներալը ուղևորվեց Կարս՝ ժամադիր լինելով մինիստրի հետ տեսակցելու 8-ի առավոտյան՝ Կարսից վերադառնալիս:

Գեն[երալ] Ուոկկերը հայտնեց, որ ինքը Կարսում կարգադրեց Շեֆքի փաշային՝ անմիջապես վերացնել թուրք զինվորական պահակները Կարս-Ալեքսանդրապոլ սահմանագծի վրայից և սահմանը բանալ ժողովրդի և գնացքների ազատ երթևեկության համար, արագացնել զորքերի դուրս հանումը, որ պետք է վերջանա ոչ ուշ հունվարի 25-ից, չարտամուծել նահանգից ոչինչ, բացի այն ռազմական գույքից, որ թուրք զորքը բերել էր իր հետ: Պարենից Շեֆքի փաշային տրվում է 25.000 փ[ութ] ցորեն՝ որպես ճանապարհի սնունդ հեռացող զորքին՝ Կարսից-Էրզրում հասնելու. մնացածն ընդունում է անգլիական իշխանությունը և հանձնում կարոտ ժողովրդին:

Կարսի նահանգի վարչական կազմակերպման և կարգավորման վերաբերմամբ բրիտանական զորահրամանատար գեներալ Ուոկկերի և Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց մինիստրի փոխադարձ համաձայնությամբ որոշվեց հետևյալը.

Գեներալ Ուոկկերը նշանակվում է Կարսում անգլիական զորական կառավարիչ, որին որոշ եղանակով ենթարկվելու է նահանգի քաղաքացիական վարչությունը (ադմինիստրացիան): Այս վարիչները նշանակվում են Հայաստանի ներքին գործոց մինիստրի կողմից, ենթարկվում են սրան և գործում են սրա հրահանգների համաձայն: Ներքին գործոց մինիստրը Կարսի նահանգային վարչությանը հրահանգներ է տալիս՝ համաձայնության գալով անգլիական զորական կառավարչի հետ: Տարաձայնության դեպքում խնդիրը լուծում է գեներալ Ուոկկերը՝ նախապես բանակցելով Հայաստանի կառավարության հետ:

Անգլիական զորական կառավարիչը Կարս է գալու մոտավորապես հունվարի 12-ին: Հայաստանի կառավարության կողմից նշանակված վարիչները, գոնե գլխավորները, պետք է այդ օրը լինեն Ալեքսանդրապոլում՝ միասին Կարս մեկնելու համար:

Երկաթուղային և հեռագրային գիծը Ալեքսանդրապոլից մինչև Կարս (առանց քաղաքի) մինչև հունվարի 15-ը անցնելու է հայ պաշտոնյաների ձեռքը: Քաղաքում ժամանակավորապես լինելու է երկաթուղու և հեռագրի համար խառն (հայ և թուրք) պաշտոնեություն, իսկ քաղաքից մինչև նախկին սահմանը՝ թուրք պաշտոնեություն, որոնք փոխարինվելու են հայ պաշտոնեությամբ թուրք զորքի հեռանալուն համընթաց:

Հայաստանի զորական իշխանությունը կարգելու է նահանգում զորական պահակ (ժանդարմերիա)՝ օրենք և կարգուկանոն պահպանելու համար: Պահակի թիվը պետք է լինի այնքան, որքան որ հարկավոր է այս նպատակի համար: Պահակը ներմուծվելու է նահանգում թուրք զորքերի հեռանալուն համընթաց և խստորեն հրահանգված պիտի լինի դեպի բնակչությունը ունենալիք իրենց վերաբերմունքի նկատմամբ:

Նահանգի կենտրոնական վարչությունը լինելու է հայկական, իսկ տեղական զանազան խորհուրդները կազմակերպվելու են համեմատական հիմունքով՝ հաշվի առնելով հայ և ոչ հայ բնակչության համեմատական այն համաչափությունը, որը եղել է նախքան նահանգը թուրքերից գրավվելը:

Ֆինանսական տեսակետով նահանգը կառավարվելու է խոհեմ տնտեսությամբ: Հարկերն ու տուրքերը ծանր չպիտի լինեն: Պաշտոնեությունը վարձատրվելու է Հայաստանի Հանրապետության մեջ ընդունված չափերով: Նահանգի ելևմուտքի բացը ծածկելու են դաշնակիցները:

Նահանգի հայկական վարչությանն հանձնարարվում է ամենակորրեկտ վերաբերմունք ունենալ դեպի բնակչության ոչ հայ տարրերը և գործով ապացուցանել, որ հայ իշխանությունը ընդունակ է բարձրանալ տեղական նախապաշարմունքներից և իրավական ու արդարամիտ կերպով կառավարելու նաև ոչ հայ տարրերը:

Եթե անգլիական հրամանատարը օգտակար դատի, Կարսի որոշ մասերը, որոնք գրեթե ամբողջովին մուսուլմանաբնակ են եղել, կարող են զատվել այս նահանգից:

Կարսի նահանգում հայ ադմինիստրացիայի կարգում չպետք է նկատվի հիմք՝ կանխորոշելու այդ շրջանի քաղաքական վիճակը, որը տնօրինվելու է կոնֆերանսի կողմից:

Նախագահ - Հայտարարում եմ 15 րոպե ընդմիջում:

Նախագահ - Նիստը վերսկսված է: Մի հանգամանքի վրա ես կուզենայի ուշադրություն դարձնել. ինչպես հայտնի է, մինչև որ օրենքները չհրապարակվեն թերթում, կառավարությունը առհասարակ իրավունք չունի գործադրելու նախահաշիվների մասին. նրանց մեծ մասը ընդունված են, երբ խորհրդի կողմից ստորագրված և ուղարկված կլինի: Այդ աշխատանքը բավական բարդ և դժվար է, դրանք պետք է արտագրվեն, տպվեն և ղրկվեն: Դա կարող է տևել 1½-2 ամիս: Ի՞նչ պետք է անել կառավարությանը այդ անել վիճակից ազատելու համար: Արդյոք խորհուրդը չի՞ կարող թույլ տալ, որ կառավարությունը ծախսեր անի ընդունված օրենքների սահմանում: Եթե խորհուրդը այդ տեսակ որոշում ընդունի, վաղը նախագահը կարող է այն հաղորդել կառավարությանը:

Ազատյան - Այդ հայտարարությունը կարելի է կառավարությանը անել, բայց անհրաժեշտ է օրինական ձևակերպում տալ՝ համապատասխան օրինագիծ ներկայացնելով:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Օրենքները ուժ են ստանում, երբ «Կառավարության լրաբեր»-ում տպվում են: Այս տարվա համար պետք է ընդունել չտպագրված վիճակի մեջ գործադրություն:

Աղբալյան - Ընդհանրապես օրենքն այդպես չի կարելի գործադրել. կան օրենքներ, որոնք վերաբերում են հասարակության:

Նախագահ - Ուրեմն հարցն սպառված է, ձևակերպված կերպով կներկայացվի խորհրդին: Ձեկուցվում է պարենավորման մինիստրության նախահաշիվը:

Վ. Տեր-Թորոսյան - Ձեկուցում է պարենավորման մինիստրության նախահաշիվը, որը հասնում է 195.700 ռ[ուբլու]: Նախահաշիվն առանձին արտագրած կցվում է արձանագրության):

Աղբալյան - Պարենավորման մինիստրության այս նախահաշիվը մի քանի ճյուղեր է ենթադրում, ինչպես՝ գյուղատնտեսության մաս և նրան կցված ստատիստիկական բաժին: Գյուղատնտեսական մասը այսպես է սահմանվում, որ նա պետք է հողերը սերմելու և պաշարի փոխադրության միջոցներ տա՝ մինչև հունձ անասուններ, գյուղատնտեսական գործիքներ և այլն հայթայթի: Ստատիստիկական բաժինը [պետք է] ազգաբնակության մթերքի և ուտեստի պահանջը երևան հանի, նյութեր հավաքի գյուղատնտեսական վիճակագրության վերաբերյալ, մթերքների բաժանում, անկախ կարգադրություն անել և այլն, և այլն. ահա այն սահմանը, որի մեջ պիտի գործի այդ բաժինը, և այդ բոլորի համար 3 մարդ պիտի գործեն: Ամենից առաջ այս գործը իր մի քանի կողմերով մտնում է ուրիշ մինիստրությունների գործավարական սահմանների մեջ, օրինակ՝ փոխառությունը երկրագործական մինիստրության է վերաբերում:

Երկրորդ՝ ստատիստիկական բաժնի մեջ ասված է, որ նյութեր հավաքելու է գյուղատնտեսական ստատիստիկայի վերաբերյալ, մինչդեռ գյուղատնտեսական բաժնի մեջ մենք այդ աշխատանքները դրել ենք. այս կողմով էլ նա մտնում է ուրիշ մինիստրության գործավարության մեջ:

Հողերը սերմելու խնդիրը երկրագործական մինիստրության է վերաբերում, իսկ երբ սերմը տալիս է խնամատարության մինիստրությունը, ինչպես և՝ գործիքները, անասունները և այլն, դա ուրիշ բան է: Հիմա հետաքրքիր է, ի՞նչ ձևով նրանք պիտի կարգադրեն այդ գործը, ինձ թվում է, թե երկու ձևով՝ կամ գյուղերը պիտի ման գան և կամ պիտի դիմեն իրենց լիազորներին. երեք մարդով կենտրոնից այս գործը վարել դժվար է: Եթե այս պաշտոնեության նախահաշիվը հետո գալիս է իբր լրացուցիչ նախահաշիվ, էլ ինչացու՞ են այն երեք մարդը: Ասում են, որ զանազան մթերքների չափը պետք է որոշեն այդ երեք մարդիկ: Մենք դրա

համար հատուկ մարդ նշանակելու պետք չենք տեսնում, միայն այս նպատակի համար դժվար է ընդունել այդ կարգի պաշտոնյաներ: Տարբեր բան կլիներ, եթե մեր երկրում հիմնվեր մի հիմնարկություն՝ առանձնապես ստատիստիկայի համար աշխատող: Անկախ հետազոտություններ անելը նույնպես ենթադրում է նոր պաշտոններ: Այս բոլորից հետո այս բաժինը լավ չի մտածված: Ինչպես տեսնում եք, նա մտնում է տարբեր մինիստրությունների մեջ: Հետո՝ նա որոշ կերպով չի ձևակերպված: Մեզ թվում է, թե այս բաժինը պետք է դուրս ձգել. ասում եմ մեր ֆրակցիայի կողմից:

Այնուհետև կգա 50.000 ռուբլի լիկվիդացիայի գործին՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար, բայց դրանից առաջ էլ եղել է մի բաժանմունք, հապա անցած ամիսների հաշիվները ո՞վ է բերելու խորհրդարան՝ վավերացնելու համար: Ըստ երևույթին պարենավորման մինիստրը հարկ չի տեսել: Նա կարծում է, որ միայն իր պաշտոնավարած օրից պիտի կազմի իր հաշիվը: Այդպես չեղան լուսավորության մինիստրության նախահաշիվները, նա ներկայացրեց անցած չորս ամիսների հաշիվները, որպես հնի ժառանգորդ: Նույնպիսի բնական ընթացք կլիներ, եթե մինիստրը ներկայացներ սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբեր եղած հաշիվները, որպեսզի հաստատեինք: Մենք կարծում ենք, որ դա պետք է պարենավորման մինիստրը ներկայացներ: Եվ որովհետև սկզբից մտածել է չկցել նախորդ հաշիվները, դրա համար խնդրել է վարկ՝ նախորդ շրջանի ծառայողների գործը վերջացնելու: Այդ առթիվ նա ստեղծել է առանձին կոմիսիա՝ գործերը լիկվիդացիայի ենթարկելու համար. էլ ինչի՞ համար է այդ հատուկ կոմիսիան, երբ կան դրա համար որոշ պաշտոններ: Դա անհորմալ երևույթ է, մանավանդ որ չգիտենք, թե այդ մասնախումբը մինչև ե՞րբ է պաշտոնավարում: Այդ պաշտոնյաների գործի վերջացումը պիտի կատարվի այն ձևով, ինչպես որ կատարվում է սովորական կարգով. հաշիվները կտեսնվի, ցուցակը կկազմվի և ներկայացնելով կպահանջվի, իսկ այդ լիկվիդացիոն կոմիսիայի գործը վերջացնելու է, որովհետև դրա համար չարժե առանձին ծախսեր անել: Ուրեմն առաջարկում եմ.

Առաջին՝ գյուղատնտեսական բաժանմունքը վերացնել,

Երկրորդ՝ լիկվիդացիայի գործը սովորական կարգով տանել և

Երրորդ՝ նախորդ շրջանի ծախսերը նույն ձևով վերջացնել:

Հովհ. Ստեփանյան - Ես զարմանում եմ, որ այսպիսի առաջարկություններ են արվում: Պետք է ասած, որ պարենավորման մինիստրության մեջ այս բաժինը պետք է կազմի մի խոշոր և կարևոր բաժին, առանց որի դժվար կլինի կազմակերպել գործը: Աղբալյանի բերած փաստերը ինձ համար համոզեցուցիչ չեն: Նա ասաց, որ պարենավորման մինիստրության ստանձնած գործերը պատկանում են ուրիշ մինիստրությանց, ուստի և այս բաժինը չպետք է լինի: Այդ բանը կարելի է և ուրիշ մինիստրությունների մեջ գտնել. օրինակ՝ բժշկական մասը, որը չի խանգարում գործին, մենք այդ Ռուսաստանից գիտենք: Այդպիսի շփման կետեր ունեին նրանք: Ինչ որ բերված է, դա օրենք չէ: Եթե երկու վարչություններ, մինիստրությունները տեսնեն, որ իրենց խանգարում են, կարող են որոշել իրենց սահմանաբաժանումները, ուստի այդ բացատրությունը երբեք համոզեցուցիչ չէ մեզ համար: Ինչ վերաբերում է ստատիստիկային, դա վերջերս Ռուսաստանում մեծ նշանակություն էր ստացել, որովհետև ոչ մեկ պետություն առանց ստատիստիկայի չի կարող գործ ստանձնել: Նա ասաց, որ կան ագենտներ, որոնք տեղեկություններ կբերեն, բայց նրանք գտնվում են գավառներում և երբ բացակայեն, դժվար կլինի տեղեկություն տալ: Ուստի մենք գտնում ենք, որ այս բաժինը անհրաժեշտ է պահել և ստատիստիկայի պաշտոնով իսկ պիտի պահել առանձին պաշտոնյա. և այն 2000-ը, որ ծախսվելու է այս բաժնի վրա, մեծ բան չէ:

Մելիք-Աղաջանյան - Պարենավորման մինիստրության ներկա նախահաշիվը հնարավորություն է տալիս մի քանի ընդհանրացումներ անել պարենավորման մինիստրության և նախկին վարչության գործունեության վրա, թե ի՞նչ գործունեություն և ի՞նչ հետևանքներ է ունեցել: Խորհրդին ծանոթ է, որ մեր ներքին և արտաքին դրությունը կախված է եղել նրա պարենավորման վիճակից: Դրա համար մեր ֆրակցիան սկզբից ևեթ խիստ կերպով հետևել է և որոշ պատկեր է

ստացել, որոնց հիման վրա դրությունը պանամայի կերպարանք է ստացել: Գործի կազմակերպության տեսակետից այդ վարչությունը եղել է կատարյալ անփույթ, զանցառությունների հաշիվ չկա: Պատգամավոր Աղբալյանը խոսեց, որ չպետք է նոր հաշիվներ ստեղծել, այլ պետք է հնի մասին էլ ասվեր, որպեսզի հաջորդականությունը պահվեր: Բերենք մի քանի թվեր: Եթե ցորենի մոնոպոլիան մտցվեց, առնվազն ենթադրվում էր գոնե 30.000 փութ հավաքել և պարենավորման բաժնի կառավարիչը հավատացնում էր՝ երկու հարյուր հազար փութն հավաքվել է: Այնինչ տեղեկությունները ցույց են տալիս, որ չի հավաքվել, այլ հավաքված է մոտ 150.000 փութ և այդ հավաքվածից այժմ ոչինչ չկա մեր հանրապետության պահեստներում: Ղավուրմայի խնդիրը ձեզ հայտնի է նույնպես: Մի քանի լրացուցիչ տեղեկություններ ևս. այժմ ընդամենը 753 փութ ղավուրմա կա և կոմիսիայի քննությունից պարզվել է, որ մոտ 120 փութ միանգամայն փչացած է և այդ փչացումը տեղի է ունեցել 15 օրվա ընթացքում: Այնուհետև այդ պայմանագրի մեջ որոշ չէր, թե կապալառուներին ի՞նչ փող պետք էր տալ և այժմ, երբ մեր կառավարությունը խիստ կարիք ունի ռուսական փողերի, ահա այս դեպքում հանկարծ տասնյակ հազարներ վերցվում և տրվում է այդ կապալառուներին՝ մի նոր արդյունքի աղբյուր բաց անելով նրանց համար: Կան և ուրիշ տեղեկություններ, որոնք ավելի զայրացուցիչ են, որ պարենավորման բաժնի կառավարիչը կարգադրություններ է անում այն շրջաններում դադարեցնել հավաքումը: Ահա այն բոլոր խնդիրները, որոնց վրա մեր ֆրակցիան հրավիրում է խորհրդի ուշադրությունը:

Եփրեմ Սարգսյան - Պարենավորման հարցի մասին մի քանի անգամ Հայաստանի Խորհուրդը զբաղվել է և մեր ֆրակցիայի կողմից հաճախ հարց եղել, թե ինչու՞ լիազորների մասին որոշ հետապնդումներ չեն եղել: Այստեղ ներկայացվել է պարենավորման մինիստրության նախահաշիվը այն օրվանից, որ նա դարձել է մինիստրություն: Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի պատգամավորի խոսքերից օգտվելը ես համարում եմ դեռ անորոշ վիճակի մասին հայտարարություն անելուն: Այն փաստերը, որ նա բերում է, դեռ չեն ստուգվել: Իհարկե, յուրաքանչյուր պատգամավոր կարող է մտնել որոշ բաժանմունքներ և փաստեր հավաքել: Այդ փաստերն ամենից առաջ լսվել են պարենավորման հանձնաժողովի նիստում: Փաստերից մեկում 150.000 փութ ցորենի մասին հիշատակված կա. այդ մասին հանձնաժողովը մի թեթև հաշիվ անելով պարզվեց, որ այդ թվերը լրիվ չեն, որ այդտեղ մի թյուրիմացություն կա: Ղավուրմայի գործի համար ռուսական հին փող տալու փաստը ճիշտ չէ: Դրա համար հանձնաժողովը հարկ եղած միջոցները ձեռք առավ: Այս է ահա հանգամանքների վիճակը, որի համար ես հրավիրում եմ խորհրդի ուշադրությունը: Մենք որոշ հարցեր ենք դնում այնտեղ, որպեսզի գործը հետապնդենք և հասցնենք որոշ վախճանի, իսկ այստեղ գալիս են բերելու դեռ չստուգված թվեր և փաստեր:

Մինախորյան - Արդարացում կամ մեղադրանք չենք անում: Մեզ թվում է, որ եթե մենք որոշ ցանկություններ ունենք այդ գործը կարգավորելու, մենք պետք է որոշ կերպով պատասխանատվության ենթարկենք նրանց, որոնք ժողովրդի արյուն-քրտինքով ձեռք բերված փողերը մսխում են անհաշիվ կերպով: Մենք միանում ենք սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի տեսակետներին, որպեսզի մի անգամ ընդմիշտ փորձ լինի ուրիշների առաջն առնելու համար: Վաղը, մյուս օրը Կարսի շրջանն ենք գործ սկսելու: Պետք է խրատվել վերջապես: Նրանք, որոնք ոճիր են գործել, այդ ոճրի համար պատասխանատվության չեն ենթարկվել: Պետք է հետևել այդ գործին: Ինչ մնում է այդ հաշիվների մասին եղած քննադատության, լիկվիդացիայի համար հարկ եղած գումարը մեզ էլ թվում է, որ միանգամայն ավելորդ է: Պարենավորման մեջ եթե ի նկատի ունենանք մի շարք պաշտոններ, մենք կտեսնենք որ բավական շտատներ կան, որոնք կարող են այդ գործը շատ դյուրությամբ կարգադրել: Եվ եթե այդտեղ որոշ դժվարություններ կան և շտատը չի կարողանում անել, թերևս թույլատրելի լինի, որ մեկ մարդ 1½-2 ամսով պաշտոնավարեր և չնախատեսված բաժնից վճարվեր և խնդիրը լուծել այդ կերպով: Ստատիստիկայի բաժնի մասին մենք կարծում ենք, որ այդ չպետք է

անել այն պարզ պատճառով, որ փոխադարձաբար կարող են իրար օգնել և սակայն ճիշտ է, որ որոշ վիճակագրական մարմին պետք է լինի այդ բաժանմունքի մեջ:

Պարենավորման մինիստրի պաշտոնակատար - Եթե ես ցանկանում եմ մի քանի բացատրություններ տալ, դա ինձ հարկադրում է պատգամավոր Աղբալյանի ճառը: Ես կարծում եմ, որ նա սխալվում է: Եթե պարենավորման մինիստրությունը մինիստրություն է, ապա ուրեմն նա պետք է ունենա իր որոշ պայմանները: Այս մինիստրության նշանակությունն է ժողովրդին պարեն տալ, սերմացու և ցորեն տալ: Երկու խնդիր կա՝ պարենավորել ներկայիս ժողովրդին՝ գտնելով պարեն ներսի և դրսի շուկայից: Իսկ եթե դուք ուզում եք պարենավորման մինիստրությունը վերածել մի մասնավոր կոմիսիայի, ուրեմն էլ ի՞նչ կարիք կա մինիստրություն կազմելու, իսկ եթե ոչ՝ նա պետք է իմանա, թե իր սահմաններում ինչքան ազգաբնակչություն կա, որի համար անհրաժեշտ է ստատիստիկա ունենալ. առանց վիճակագրության, միևնույն է թե մթության մեջ գործել: Այդ երեք մարդը բավական են այդ գործի համար: Այնտեղ կան թվեր, որոնցից պիտի օգտվեն, և այդ բանի համար այս փոքրիկ ապարատը բավական է: Նա չի գնում շրջաններն ուսումնասիրելու, այլ եղած նյութերը մի հայտարարի է վերածում: Եթե դուք ունեք մի մինիստրություն, որին դուք զրկում եք մի փոքրիկ օրգանից, որը պետք է իմանա, թե երկիրը ի՞նչ կարիքներ ունի, ի՞նչ կներկայացնի այդ մինիստրությունը: Ես ձեզ կարող եմ հավատացնել, որ եթե դուք հանեք, ես չեմ լինի այդ մինիստրության գլուխը, բայց ես պարտք եմ զգում պարզաբանելու, որովհետև այդ մինիստրությունը իր ծառայողներից պիտի կազմի այդ պաշտոնեությունը: Այստեղ մենք խնայողություն արել ենք այնպես, ինչպես հարկն է: Այդ ճյուղը անհրաժեշտություն է և դա հետևյալ պատճառով. Հայաստանի հացը չափազանց քիչ է և նա երբեք չի բավականացնի հայ ժողովրդին: Պետք է ստատիստիկական տվյալների վրա հիմնվել և ըստ այդմ էլ դրսից ցորեն ներմուծել: Հարկավոր է նաև սերմացու, որի մասին պարենավորման մինիստրը պետք է հոգ տանի և որը առանց ստատիստիկայի անհնար է որոշել: Այստեղ խոսք եղավ, որ մինիստրը երկու ամսվա նախահաշիվ է ներկայացրել, այնինչ նա պարտավոր է ամբողջ պարենավորման նախահաշիվը ներկայացնել: Ինչպե՞ս կարող էի ես 2 ամսից ավել նախահաշիվ ներկայացնել, երբ այդ մասը մինիստրություն չի եղել, այլ մի բաժանմունք: Ուրեմն հաշիվ պետք է ներկայացնել և այդ հաշիվը կներկայացնեմ: Այս երկու օրը մինիստրությունը զբաղված է այդ հաշիվներով, որը մի բաբելոնյան խառնակություն է ներկայացնում:

Այն առարկությունը, թե լիկվիդացիոն կոմիսիան մի առանձին մարմին է, դա ճիշտ չէ: Մեզ մոտ կան շտատնի և նեշտատնի ծառայողներ: Լիկվիդացիոն մարմինը վերջին (նեշտատնի) ծառայողներից է և դա համարվում է հաշվապահական մասը: Այդ մարմինը ստեղծված է, որպեսզի գործը ուժեղացվի: Երևակայեցեք, ամբողջ Հայաստանում միմիայն մի զեմստվո կա, որը պատրաստ է պարենավորման մինիստրությանը 1.700.000 ռուբլու հաշիվ ներկայացնել և մինչև հիմա չի ներկայացրել: Դրա համար ես ստիպված եմ այստեղից հատուկ մարդիկ ուղարկել, որպեսզի այդ գործը լիկվիդացիայի ենթարկեն: Եվ այդպես մի շարք տեղեր մենք պետք է մարդիկ ուղարկենք, որպեսզի հաշիվները ռևիզիայի և լիկվիդացիայի ենթարկվեն: Ուստի ես խնդրում եմ խորհրդին չմերժել հիսուն հազար ռուբլի տալը, որովհետև դա անհրաժեշտ ծախք է: Չմոռանամ ասել, որ այդ գումարից հատկացվում է նաև ռևիզիայի:

Մելիք Աղաջանյան - Այն պաշտոնյաները, որոնք հաշիվ չեն ներկայացրել մինչև այժմ, նրանք ոճիկ ստանու՞մ են:

Պարեն[ավորման] մին[իստրի] պաշտոնակատար - Չեն ստանում:

Զուբյան - Մինիստրի բացատրությունից երևաց, որ 50.000 ռուբլու մեջ մտնում է և' լիկվիդացիայի և' ռևիզիայի ծախքերը: Մի հոդվածում չի կարելի երկու իմաստ դնել, ուստի մենք առաջարկում ենք վերադարձնել այդ սմետան մինիստրին, որպեսզի այդ հոդվածը վերածի երկու հոդվածի:

Պարենավորման մինիստրի պաշտոնակատար - Դժվար է ծառայողների ցուցակը ներկայացնել, ուստի և չեմ կարող երկու հոդվածի վերածել:

Զուբյան - Եթե մինիստրը իմ առաջարկը չի ընդունում, մնում է որոշ գումար խորհուրդը դնի մինիստրի տրամադրության տակ՝ հիշյալ ծախքերը ծածկելու համար:

Աղբալյան - Նախքան սմետաների հաստատվելը, որոշ գումար է բաց թողնված կառավարությանը՝ ծառայողներին տալու համար: Ուստի ես առաջարկում եմ այդ կրեդիտից տալ ծառայողների ռոճիկը:

Պարենավորման մինիստրի պաշտոնակատար - Այլևս կրեդիտ չկա ծառայողների համար:

Ազատյան - Որովհետև քվորում չկա, առաջարկում եմ նիստը փակել:

Նախագահ - Պարո՛ն Տեր-Մկրտչյան, տեսեք, եթե խորհրդի շենքում պատգամավորներ կան, հրավիրեք այստեղ:

(Պետրոս Զաքարյանի գալով քվորում լինում է:)

Պարենավորման մինիստրի պաշտոնակատար - Ես առաջարկում եմ 30.000 ռուբլի՝ռևիզիայի:

Առաջարկությունը խորհրդի կողմից առարկության չհանդիպելով՝ ընդունվում է:

Նախագահ - Այս նախահաշիվը արդեն զեկուցվեց: Թույլ տվեք համարել 3-րդ ընթերցումը կատարված՝ ֆինանսական հանձնաժողովի ուղղումներով և հավելումներով, չհաշված ստատիստիկային մասը, որը մնում է սմետայում:

Խորհուրդը առարկություն չի անում:

Ազատյան - Խնդրում եմ մեր բանաձևը քննարկել:

Նախագահ - Քվեարկության է դրվում սոց[իալ]-դեմոկրատների բանաձևը: 2 ձայն, չի անցնում:

Նախագահ - Այժմ քվեարկության է դրվում պարենավորման մինիստրի նախահաշիվն իր ամբողջությամբ՝ ֆինանսական հանձնաժողովի արած հավելումներով և ուղղումներով (ստատիստիկական մասը մնում է), որը ընդունվում և վերջնականապես հաստատվում է խորհրդի կողմից: Հայտարարում եմ նիստը փակված:

Քարտուղար՝ *Ե.Սարգսյան*

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 57-68: Բնագիր: Ձեռագիր: